

**VIII. ՀՀ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ
ՀՀ ԱՎԾ-ին ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
ՓԱՍՏԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐ**

Ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման ծրագրերի, տարեսկզբին հաստատված 2004թ. տարեկան նախահաշիվների նկատմամբ փաստացի հատկացվել են.

- պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման համար (01.07.01 ծրագրով) սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 30.12.2004թ. կազմել է 353979.5 հազ. դրամ՝ նախատեսված 364404.8 հազ. դրամի փոխարեն կամ փաստացի ֆինանսավորումը կատարվել է 97.1%-ով (2003թ.՝ 97.9%-ի փոխարեն): Ընդ որում, ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացված բյուջետային հայտերի հիման վրա հատկացումներն իրականացվել են 100%-ով: Իսկ ՀՀ ԱՎԾ կողմից բյուջետային հայտերը պակաս են ներկայացվել մասնավորապես «գործուղման և ծառայողական ուղևորությունների ծախսեր», «տրանսպորտի ծառայությունների վճարներ», «էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր», «այլ կոմունալ ծախսեր», «շենքերի վարձակալության ծախսեր» հոդվածների գծով, որի հետևանքով տարեկան նախահաշիվով նախատեսվածի նկատմամբ ֆինանսավորումը կատարվել է համապատասխանաբար՝ 93.5%, 52%, 88.2%, 38.9% և 84.5%-ով:

- պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման համար (01.07.03 ծրագրով) սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 30.12.2004թ. կազմել է 192820.8 հազ. դրամ՝ նախատեսված 208124.7 հազ.դրամի փոխարեն կամ փաստացի ֆինանսավորումը կատարվել է 92.6%-ով (2003թ.-ին՝ 98.6%): Ընդ որում, ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացված բյուջետային հայտերի հիման վրա հատկացումներն իրականացվել են գրեթե 100%-ով (բացառությամբ «գրասենյակային ապրանքներ և նյութեր» հոդվածի, որի գծով վճարումները պակաս են կատարվել 423.832 հազ դրամի չափով՝ ֆինանսավորում չլինելու պատճառով): Իսկ ՀՀ ԱՎԾ կողմից բյուջետային հայտերը պակաս են ներկայացվել «ընթացիկ ներքին այլ տրանսֆերտային վճարներ», «գրասենյակային ապրանքներ և նյութեր», «գործուղումներ և ծառայողական ուղևորություններ», «տրանսպորտի ծառայությունների վճարներ», «կապի ծառայությունների վճարներ», «էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր» և «ջրմուղ-կոյուղուց օգտվելու վարձեր» հոդվածների գծով, որի հետևանքով տարեկան նախահաշիվով նախատեսվածի ֆինանսավորումը կատարվել է համապատասխանաբար 84.4%, 90.3%, 72.7%, 36.0%, 92.0%, 83.5% և 51.2%-ով: